

## ԳՐԱԿԱՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐ

Մատթէոս Մամուրեան.—Տիկին Սրբուհի Տիւսաբ.—Հ. Գարեգին վ. Զարբհանալեան.—Ստեփան Ոսկան:

Քսաներորդ դարի առաջին տարին դեռ չենք կիսել, բայց արեւմեան հայութիւնը արդէն երեք զգալի կորուստ ունեցաւ. մեռան Մամուրեան, Տ. Տիւսաբ, Հ. Զարբհանալեան եւ Ստեփան Ոսկան: Չորսն էլ գրական գործիչներ:

Նրանք այնքան ինքնուրոյն դիմէին ունին, որ մեր նորագոյն գրականութեան պատմութեան մի-մի էջն են ներկայացնում: Մամուրեան պատկանում է քիւրճահայ գործիչների այն սերնդին, որ XIX դարի կեսից իր եռանդուն գործունեութեամբ անկեղծ ոգեւորութեան մի շրջան բացեց հայկական գրականութեան եւ կեանքի մէջ, մի շրջան, որ գալիս էր յաջորդելու հին կղերական սերնդին եւ, միանգամայն չը հեռանալով նրանից, աւելի լայն հանրամարդկային սկզբունքների, քաղաքակրթութեան եւ ազգութեան սկզբունքները քարոզելու:—Տիկին Տիւսաբ նշանաւոր է ոչ այնքան իր գրական երկերով, որքան այն հանգամանքի շնորհիւ, որ նա առաջին վիպագրող հայուհին էր եւ կենսական ահագին նշանակութիւն ունեցող մի դասի—կանանց հարցի—ներկայացուցիչն էր:—Հ. Զարբհանալեան մեր կղերական բազմաթիւ գրողների շարքում կարողացաւ բոլորովին առանձնակի տեղ գրաւել, ընտրելով մի այնպիսի մասնաճիւղ, որին շատ էջերն են նուիրուել եւ որի մէջ ոչ ոք նրա չափ անուն չէ հանել: Իսկ Ստեփան Ոսկանի մասին զաղափար է տալիս այս Ռ-ի «Պարբ. Հրատ.» մէջ տպուած նկատողութիւնը:

Մանօթանանք այս անհետացած դիմերի հետ առաջին-անանձին:

### I

Մատթէոս Մամուրեանը ծնուել է 1830 թուականին Զմիւռ-նիայում, աղքատ ընտանիքի մէջ: Մանկութեան հասակում իր

Ճնողների հետ տեղափոխուեց Եգիպտոս, ուր երեք տարի մի յունական դպրոցում սովորեց յունարէն և արաբերէն լեզուները: 1842 թուականին Մամուրեան ընտանիքը դարձեալ Զմիւռնիայումն է և 12 տարեկան Մատթէոսը մտնում է հայոց Մեսրոպեան դպրոցը:

Ժամանակը, միջավայրը այնպէս էին, որ առաջ էին քաշում ընդունակ, գործունեայ մարդկանց: Ժամանակը Գիւլիանէի «Թանգիմաթի» ժամանակն էր, իսկ միջավայրը— Զմիւռնիայի պէս նշանաւոր հայկական գաղթականութիւնը:

1839 թուականին սուլթան Աբդիւլ-Մէջիթ Գիւլիանէի պալատում հրատարակած Խաթթը-Շէրիֆով երաշխագործւում էր անխտիր իր բոլոր հպատակների կեպնքի, գոյքի, սեփականութեան ապահովութիւնը և անխտիր ամենքին հաւասար իրաւունքների էր խոստանում: Այդ նշանաւոր հրովարտակը նոր դարադուլն էր բաց անում թիւրքահպատակ քրիստոնեաների համար. նրանց մէջ սկսւում է ազգայնական և առաջադիմական շարժում. շարժում են այն քրիստոնեայ տարրերը, որոնք կենսունակութեան և վերածնութեան ոյժ ունէին իրանց մէջ: Այդ ոյժից զուրկ չէին և հայերը: Կ. Պօլսում նրանք արդէն նշաններ էին ցոյց տալիս, որ չեն ուզում յետ մնալ ժամանակի ոգուց և պահանջներից: Բայց կար մի ուրիշ տեղ էլ, ուր այդ նշանները աւելի շօշափելի էին: Եւ դա Զմիւռնիան էր:

Միջերկրական ծովի այդ կարևոր նաւահանգիստը վաղուց էր ծանօթ վաճառական հայերին. բայց փոքր ի շատէ նշանաւոր հայ գաղթականութիւն այնտեղ սկսեց կազմուել XVIII դարից: Մի այնպիսի տեղ, ուր Արևմուտքը անգաղար չլիւում էր Արևելքի հետ, հայերը թմրած ու մեռած չը մնացին: Երեսն են գալիս հիմնարկութիւններ, որոնք ցոյց են տալիս, թէ ինչ էին Զմիւռնիայի հայերը: Նոյն դարի վերջում Զմիւռնիայում հիմնւում է Մեսրոպեան դպրոցը. 1801 թուականին ժողովրդական հանգանակութեամբ բացւում է Լուսաւորչեան հիւանդանոցը աղքատների համար: 1820 թուականին այնտեղ կայ օրիորդաց դպրոց. 1825-ին վերանորոգւում է Մեսրոպեան դպրոցի շէնութիւնը, իսկ երեսնական թուականների սկզբում նոր շէնութիւն է կառուցւում օրիորդաց դպրոցի համար: Կրթական գործը զարգանում է, նախանձելի դրութեան համնում: Նոյն երեսնական թուականներին Մեսրոպեան դպրոցի տեսուչ է նշանակւում Անդրէաս վարժապետ Փափազեանը, Եւրոպայում ճանապարհորդած մի ընդունակ և արդիւնաւոր մարդ, որ բարձրացնում է դպրոցի նշանակութիւնը, նրա ոսկեդարի սկիզբն է

դնում: Նա էր, որ դպրոցի մէջ մտցրեց իտալական, թիւրքական, յունական, ապա և ֆրանսիական ու անգլիական լեզուների դասաւանդութիւնը: Դպրոցը այնքան մեծ հռչակ է ստանում, որ հետաւոր քաղաքներից էլ աշակերտներ են ուղարկում այնտեղ: Ահա այդ ոսկեդարի ժամանակն էր, որ Մամուրեանը մտաւ Մեսրոպեան դպրոցը: Այդտեղ դաստիարակուեցան և այն երիտասարդները, որոնք Զմիւռնիայում մի բեղմնաւոր գրական շրջան սկսեցին և ծաղկեցրին: Վերջապէս յիշենք, որ 1810-ական թուականներին Զմիւռնիայում հիմնուեցան «Սիւնեաց» և «Արագածունեաց» բարեգործական ընկերութիւնները, Հիմնադիրները Մեսրոպեան դպրոցի աշակերտներն էին, խորախուսողը, ղեկավարողը— Անդրէաս վարժապետ Փափազեանը: Առաջին ընկերութիւնը զուտ կրթական էր և նպատակ ունէր ուսում տարածել Զմիւռնիայի թեմի հայերի մէջ: Իսկ երկրորդը զուտ գրական-հրատարակչական ընկերութիւն էր:

Դպրոցական առաջադիմութեան հետ Զմիւռնիան շատ նըշանաւոր դեր էր խաղում և գրական առաջադիմութեան մէջ: Դա այն քաղաքն է, որ այնքան ահագին գործ է կատարել մասաւադ մեր աշխարհաբար լեզուի պատմութեան մէջ: Վերին աստիճանի հետաքրքրական է այն հանգամանքը, որ թէ թիւրքահայերի և թէ ուսաահայերի մէջ աշխարհաբարի առաջին կողմնակիցները, նրան գործնական լեզու դարձնողները բոլորքական միսիոնարներն էին \*): Նրանք համարեա միաժամանակ են երևան գալիս Ռուսաստանի և Թիւրքիայի հայերի մէջ: 1830-ական թուականներին Մալտա կղզուց Զմիւռնիա տեղափոխուեցին ամերիկացի և անգլիացի միսիոնարները և մեծ եռանդով գործի կպան: Բացուեց Գուլիէլմոս Կոնֆէրիթի նշանաւոր տըպարանը և կրօնական գրքերի մի երկար շարք սկսեց հրատարակուել աշխարհաբար լեզուով: Լաւ էին հասկացել այդ միսիոնարները թէ ինչպէս պէտք է քարոզել ժողովրդին: 1838 թուից նրանք սկսում են հրատարակել «Շտեմարան Պիտանի Գիտելեաց» ամսաթերթը. և դա մի այնպիսի ժամանակ, երբ

\*) Պատմական ճշմարտութիւնը պարտաւորեցնում է մեզ ասել այտեղ, որ աշխարհաբար լեզուն վաղուց գործածել էին սկսել Վենետիկի Միսիթարեանները: Բայց դա մի ակամայ հարկ էր, որ տալիս էին նրանք ժամանակին: Ամեն անգամ նրանք զանգատուում էին, թէ ազգը չը գիտէ գրաբար, ուստի իրանք հարկադրուած են աշխարհաբար գրել գոնէ մի քանի գրքեր, որոնք նշանակուած էին ժողովրդի համար: Միսիթարեանները աւելորդ էին համարում մշակել աշխարհաբարը և մինչև 1840-ական թուականները նրանք գործ էին ածում Կ. Պօլսի գաւառաբարբառը, որ լիքն էր թիւրքերէն բառերով:

ուրիշ որ և է տեղ հայերէն պարբերական հրատարակութիւն չը կար: Առաջին համարի մէջ խմբագրութիւնն ասում էր. «Քանի որ ան ազնիւ լեզուն (գրաբարը) ազգին մեծ մասը չի հասկընար, և քանի որ ձյմարիտ մարդասիրութիւնը միշտ շատերուն օգուտին կը նայի՝ քան թէ քիչերուն բաղձանքը կատարելու, արժան դատեցանք, որ մեր Շտեմարանը ռամկօրէն ըլլայ: Ատելի է մեզի գիտութիւնը կողպաքի տակ դնել, որ աղքատը և տգէտը չի կրնայ առնել անոր համը: Ասիկա ջուրը ու օդը անոնցմէ արգելել է \*):

Մրցակցութիւնը կենդանութեան աղբիւր է: Յաջորդ տարին Զմիւռնիայի մէջ սկսում է հրատարակուել «Արշալոյս Արատեան» նշանաւոր լրագիրը. դա առաջին քաղաքական և հասարակական լրագիրն էր մեզանում, որ գործ ունէր ընթացիկ կեանքի հետ: 1843 թուականին վերս յիշած «Արագածունեաց ընկերութիւնը» սկսեց հրատարակել «Հայրենասէր» անունով լրագիրը և գրքեր տպել ժողովրդի համար:

Ահա այգալիսի միջավայրում էին անցնում Մատթէոս Մամուրեանի դպրոցական տարիները: Բայց մենակ Զմիւռնիան չէր նրան դաստիարակողը: Այգտեղից Մամուրեանը գնաց Պարիզ, ուր մտաւ Մուրադեան վարժարանը:

Հնդկաստանցի Սամուէլ Մուրադեանի միլիօններով բացուած այս դպրոցը, որ նոր էր Իտալիայից տեղափոխուել Պարիզ, նոյնպէս իր ամենալաւ, ոսկեղէն օրերումն էր գտնուում: Վենետիկի Միթիթարեանները, որոնց ձեռքին էր գտնուում Մուրադեան վարժարանը, պատրաստում էին այնպիսի աշակերտներ, որոնք նշանաւոր հանդիսացան թիւրքահայերի կեանքում: Այգտեղից էին դուրս եկել այն լուսամիտ երիտասարդները, որոնց առաջին գործը եղաւ հաշտութիւն և համերաշխութիւն մտցնել լուսաւորչական և կաթոլիկ հայերի մէջ: Այդ հաշտութիւնը անհնարին էր եղել դարերից ի վեր. բայց մինչև այդ ամեն ինչ գտնուում էր հոգեւորականների ձեռքին, որոնք չէին կամենում հաշտուել: Այժմ ծնուել էր ընդհանուր ազգային դա-

\* Մի բաղդատութիւն դնելու համար թէ ինչ էին մտածում նոյն աշխարհաբարի մասին Միթիթարեան հայրերը, որոնք այն ժամանակներում դեռ հայոց գրականութեան տէրերն էին, բերենք մի կտոր Հ. Ագեբեանի «Դեղ կենաց» գրքի վերջաբանից (Վենետիկ, 1842). «Սնանկ է նէ մեր ազգին մէջն, որ կուզենք Սատուով ծաղկեցնել զնիւթին և զարտաքին գիտութիւն, էն առաջ պիտ որ ջանանք գրագիտութեան դուռը բանալ. դուռը գո՛ց է նէ, ինչով կը բացուի. լայտ է թէ բալլիքով. գրաց գիտութեան բալլիքը ո՛րն է. լայտ է թէ գրոց լեզուն, որ ասել է գրաւ կամ գրաբարաւ»:

դափարը և այդ ասպարէզում միմեանց հետ ձեռք-ձեռքի տուած աշխատելու համար հայ-կաթոլիկ երիտասարդութիւնը 1848 թուին հիմնեց Կ. Պօլսում «Համազգեաց» բարեգործական ընկերութիւնը, որ ունէր շատ լայն ծրագիր և որի նպատակն էր նպաստել հայերի մտաւոր և կուլտուրական առաջադիմութեան: Մխիթարեան վարդապետները եռանդուն մասնակցութիւն ունէին այդ համազգային գործի մէջ: Բայց նրա դէմ զինուում է կաթոլիկ ֆանատիկոսութիւնը, որի ներկայացուցիչն էր Հասուն պատրիարքը: Աշխատում են կործանել «Համազգեաց» ընկերութիւնը, բայց կրթուած երիտասարդութիւնը արիաքար դիմադրում է կղերի սև արարքներին և ընկերութեան շուրջը բոբրեղում է մի շատ տաք պայքար, որի մէջ արծարծւում են ազգայնութեան խնդիրը, կրօնական խտրութիւնների վնասներն են ապացուցւում: Սա մի գեղեցիկ կրթարան էր ժողովրդի համար, այն ժողովրդի, որ երկար-երկար ժամանակ այնքան տառապանքներ ու տանջանքներ էր կրել կրօնական երկպառակութիւնների պատճառով: Հասունը, վերջապէս, կարողանում է մատնութեան միջոցով փակել տալ «Համազգեաց» ընկերութիւնը, բայց կրթուած երիտասարդութիւնը շարունակում է կռիւը նրա դէմ: Կազմւում են հասունեան և հակահասունեան կուսակցութիւնները, որոնց ընդհարումները տնում են երկար տարիներ: Հասունեանները օտարամուլ, ֆանատիկոս կաթոլիկ հայերն էին, իսկ նրանց հակառակորդները հիմնում էին ազգայնութեան վրայ, ասում էին թէ կաթոլիկ լինելը ոչ ոքին չէ արգելում ճշմարիտ հայ լինել: Եւ հայութեան գաղափարը հասունանում էր այդ վէճերի մէջ, բաժանուելով դաւանական հարցից, որ դրանից առաջ ազգութեան միակ նշան էր համարւում:

Այսպէս էր այն երիտասարդութիւնը, որ կրթւում էր Եւրոպայի հողի վրայ, գլխաւորապէս Մուրադեան վարժարանում: Այդ դպրոցում գործում էին այնպիսի նշանաւոր Մխիթարեաններ, ինչպէս էին Գաբրիէլ Այվազովսկի, Սարգիս Թէոդորեան և ուրիշները: Բայց Մուրադեան վարժարանը, այնուամենայնիւ, մի փակ կղերական հիմնարկութիւն էր, որի մէջ ամեն միջոց գործադրւում էր, որպէս զի երկրորդ հանրապետութեան ժամանակի Պարիզը իր ազատարար, հակակղերական հոսանքների մէջ չառնէ աշակերտներին: Հսկողութիւնը այն աստիճան խրատութեան էր հասնում, որ եթէ մէկի ծնողները Պարիզում էին ապրում, նա կարող էր այցելել նրանց միայն դպրոցի վերակացուի հետ միասին. իսկ գիշերը մնալ նոյն իսկ ծնողների մօտ:

չէր թոյլատրուում \*)։ Ահա այդ հանգամանքի շնորհիւ կրթութիւնը դպրոցում գլխաւորապէս կրօնական էր և այստեղից դուրս եկածները չափաւոր մտածմունքների տէր մարդիկ էին. մի կողմից սաստիկ հայրենասէր, միւս կողմից եւրոպական լուսաւորութեան կողմնակից, բայց, ի հարկէ, չափաւոր աստիճանով. կրօնը շարունակուում էր մնալ նրանց համար ամենակարեւոր բանը։

Այսպէս էր Մամուրեանը. այսպէս էր և նրա ընկեր և հայրենակից Մարկոս Աղաբէկեանը. Կեանքի մէջ այդ երկուսը միշտ մի և նոյն ուղղութեան հետեւեցին. ընդունելով կրօնական երկպառակութիւնների վնասակարութիւնը, ընդունելով որ եւրոպական լոյսը պիտի հայերի վերածնունդը պատրաստէ, նրանք ազգայնութեան հիմք և միակ ապաւէն հրատարակուում էին լուսաւորչական կրօնը, հակառակ էին իրանց ուսուցիչ Մխիթարեաններին \*\*) և օտարադաւան հայերի վերաբերմամբ միայն այդ ցանկութիւնն ունէին, որ նրանք վերադառնան մայրենի եկեղեցու գիրկը, որովհետև լուսաւորչական կրօնն է, որ պահել է և պիտի պահէ հայութիւնը։ Դրօշակ դարձնելով «կրօն և ազգութիւն», նրանք պահանջում էին, որ կրթութիւնը ունենայ այսպիսի նշանաբան. «Բարգաւաճումն հայրենասիրութեան. Զարգացումն Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ. Մաւալումն ազգային լեզուի» ուսմանց և գիտութեանց միջոցով։ Այս ուղղութեան ընդող ներկայացուցիչ հանգիստացաւ մեզանում «Կրօնունի» ամսագիրը, որին աշխատակցում էր և Մամուրեանը։ Դա, ինչպէս յայտնի է, բռնում էր հին սերնդի և նոր, ազատ մտածող երիտասարդութեան մէջտեղը. դա խաւարամիտ «Մեղուն» չէր, բայց ոչ էլ համարձակախօս, արմատական վերանորոգութիւններ պահանջող «Հիւսիսափայլը»։ Վերջինիս խիստ պահանջներից «Կրօնունի» վրդովւում էր, բայց «Մեղունի» կրօնամոլ ու հնամոլ քարոզների վերաբերմամբ հանգիստ, նոյն իսկ քարենաճ էր մնում։

Բայց և այսպիսի դաւանութիւնների տէր երիտասարդութիւնը նշանաւոր առաջադիմութիւն էր իր ժամանակի համար։ Մտնելով ասպարէզ, նա ընդհարուեց հին սերնդի հետ, որովհետև ունէր աւելի լայն աշխարհայեացքներ, չէր խնկարկում ազգայական և ամիրայական դասակարգին, այլ պահանջում էր, որ

\*) „Յայտարարութիւն Մուրադեան վարժարանին որ ի Փարիզ“. Վենետիկ, 1847.

\*\*) Պէտք է ասել որ Մխիթարեաններն էլ չը կարողացան պահուել իրանց բռնած պատուաւոր դիրքում. նրանք հպատակուեցան Հռոմի պահանջներին, հաշտուեցան Հասունի քաղաքականութեան հետ և զցեցին իրանց վարկը։

ժողովուրդը դառնայ իր եկեղեցական և կրթական գործերի տէրը և կառավարողը։ Մի երիտասարդութիւն էր դա, որ մեղք չէր համարում կարգալ Վօլտէրը, Մօնտէսքէօն, Երեմի խօսում էր նրանց անունից։ Հին սերնդի ամենանշանաւոր ներկայացուցիչներից մէկը, Չամուրճեան, «անկրօն» անունն էր տալիս Մամուրեանին։

Վերջացնելով ուսումը 1850 թուականին, Մամուրեանը մինչև իր կեանքի վերջը նուիրուած էր գալլոցական և գրական գործունէութեան։ Երկար ժամանակ նա ուսուցչութիւն է արել, 20 տարի Զմիւռնիայի Մեսրոպեան գալլոցի տեսուչն է եղել։ Նրա մանկավարժական գործունէութեան մասին մենք երկար խօսելիք չունենք, այնքան աղքատ են մեզ մօտ եղած տեղեկութիւնները։ Կը բերենք մի կտոր Մեսրոպեան գալլոցի մի տեղեկագրից, որից երևում է, թէ ինչպիսի ուղղութիւն էր տալիս Մամուրեան կրթական գործին։

Վարդն երրորդ բարձրագոյն անուանեալ պարունակէ քառեակ դասարանս, յարոց առաջինն և երկրորդ հրահանգին շառաջին մասն գրարաութեականութեան, երրորդն ի համաձայնութեան, իսկ չորրորդն պարապի ի կրթութիւնս հետտորական շարագրութեանց և բարձր թարգմանութեանց և ճաշակի հալացի ոճոյ հանդերձ ուսմամբ նախնեաց ընտիր մատենագրութեանց։ Ուսումն կրօնի և պատմութեան և աշխարհագրութեան և թուագիտութեան և եկեղեցական և ազգային երգոց աւանդի ըստ կարգի և աստիճանի դասարանաց։ Նոյնպէս հրահանգին աշակերտք ի վարժս բնագիտութեան, տոմարակալութեան, զաղղիւրէն, անգլիիւրէն և տաճկերէն լիզոաց։—Յատուրս սուրբ Զատիկի և սուրբ Ծննդեան աշակերտք ընդ հսկողութեամբ ներքին վարժապետաց մատչեն ի սուրբ Հաղորդութեան \*)։

Այդ տողերը կարդացուել են 1875 թուին, գալլոցի յիսնամեայ յօբելեանի օրը։

Դիմենք այժմ Մամուրեանի գրական գործունէութեան, որ սկսուել է ուսուցչական գործունէութեան հետ միաժամանակ։ Մենք դարձեալ չը պիտի աչքից հեռացնենք ժամանակը, հանգամանքները։ Յիսնական թուականների առաջին կէսում սկսուելի Դրիմի պատերազմը։ Թիւրքիան դաշնակից էր անգլիացիների և ֆրանսիացիների հետ։ Պատերազմը Բօսֆօրի ափերն է բերում մեծ քանակութեամբ եւրոպացիներ։ Սկսւում են բարքերի և հասկացողութիւնների փոփոխութիւններ։ 1856 թուականին, երբ դեռ չէր կնքուել Պարիզի դաշնագրութիւնը, սուլթան Աբդուլ-Մէջիդ հրատարակեց իր խաթիւր-Հիւմայունը, որով դարձեալ իրաւունքներ և հաւասարութիւն էր չնորհւում քրիստոնեաներին։ Այդ թուղթը հարկաւոր էր Թիւրքիային, որպէս զի Պարիզի վեհաժողովում խօսք չը բացուի քրիստոնեա-

\*) Հ. Քօսեան—«Հայք ի Զմիւռնիա», Վիեննա. 1899, եր. 127։

ների դրութեան մասին: Բայց և այնպէս, Աբգիւլ-Մէջլիդի կառավարութիւնը բաւական համբերող և երկայնամիտ էր. և բարեկարգութիւնների մի հոսանք առաջացաւ Թիւրքիայում: Բանը այնտեղին հասաւ, որ նոյն իսկ ծրագիր կազմուեց քրիստոնեաներից էլ զինուոր վերցնելու մասին: Մամուլը շատ ազատութիւններ ունէր, արծարծուում էին ազգային հարցեր:

Այդ ժամանակամիջոցը մի նոր խթան հանդիսացաւ, որպէս զի Կ. Պօլսի հայ ժողովուրդը առաջ մղէ իր իրաւունքների դատը, որ սկսել էր վաղուց: Կռիւր ժողովրդական տարրերի և ամիրայական բռնակալ դասակարգի մէջ ընդունեց աւելի տաք կիրպարանք: Կրթուած երիտասարդութիւնը ժողովրդի հետ էր և փառաւոր յաղթանակ տարաւ, խմբագրելով և ընդունել տալով Թիւրքիայի հայոց Սահմանադրութիւնը: Դա, ինչպէս յայտնի է, վարչական մի բարդ սխտեմ էր. հայ ժողովուրդը իր ընտրած պատգամաւորների միջոցով կարգադրում էր մինչև այդ պատրիարքի իրաւասութեան նշխարկուած ազգային-եկեղեցական գործերը: Իբրև մի նոր, լուսաւոր երևոյթ, Սահմանադրութիւնը անագին վէճեր և պայքարներ բացաւ: Բայց հին, հակա-ժողովրդական սիրունգը ջարդուած մնաց և Սահմանադրութիւնը գործադրուեց 1860 թուականից: Թիւրքաց մայրաքաղաքում չը տեսնուած բան էր 220 երեսփոխաններից կազմուած այդ մասնաւոր հայակական պարլամէնտը, որ կոչւում էր Ազգային ժողով. և Թիւրք կառավարութիւնը ոչինչ չունէր դրա դէմ: Յայտնի է թէ այդ հիմնարկութիւնը որքան բարձրացրեց Թիւրքահայերի ազգային ոգին, որպիսի հրճուանքների և տօնախմբութիւնների առարկայ էր նա տարիների ընթացքում:

Այդ մեծ, թէև ոչ միանգամայն կատարեալ գործը պատրաստող երիտասարդութեան մէջ էր և Մամուրեանը. նա աշխատում էր թէ՛ գործով, իբրև պատրիարքարանի պաշտօնեայ և թէ՛ գրչով, իբրև հրապարակախօս: Նրա գրիչը բաւական յայտնի էր դարձել յիսնական թուականների կէսից թէ՛ ինքնուրոյն յօդուածներով և թէ՛ թարգմանութիւններով: 1870 թուականից աշխատակցում էր «Կոստանկին» և միաժամանակ գրում էր և Կ. Պօլսի ու Զմիւռնիայի թերթերում: 1864 թուականին նա Զմիւռնիայից Կ. Պօլսի է փոխադրում «Մաղիկ» հանդէսը և սկսում է ինքը խմբագրել, մնալով պատրիարքարանի պաշտօնեայ: Այդ ժամանակներում նա գրում էր «Վրոյր» կեղծ անունով: 1865 թուին հեռանում է Կ. Պօլսից և ընդ միշտ հաստատւում Զմիւռնիայում: Այստեղ մենք ներկայ ենք մի գրական վերին աստիճանի եռանդուն շարժման:

Շարժման գլուխ կանգնած է մի հայ սուլթանատէր Տիգ-

րան Յարութիւն Տէտէեան, որ 1853 թուականից սկսել էր հայերէն հրատարակութիւնների շարքը: Դա մի անխոնջ եւ երախտաւոր հրատարակիչ էր, որի նմանը հայերիս մէջ չէ տեսնուած: Նա ինքն էլ գրագէտ եւ լեզուագէտ մարդ էր, լուսաւորուած, գրական ճաշակի տէր: 1853-ին նա հրատարակեց «Արփի Արարատեան» ամսագիրը, որի մէջ իբրեւ յաւելուած տպւում էին թարգմանութիւններ Շէքսպիրից, Մօլիերից եւ այլ ինքնուրոյն ու թարգմանական գործեր: Այդ յաւելուածները յետոյ առանձին գրքեր կազմեցին: Հետզհետէ Տէտէեան տպարանից հրատարակուեցան բազմաթիւ գրքեր: Արեւմտեան աշխարհաբարի մշակման մի փայլուն ժամանակամիջոցն էր դա: Թարգմանւում էին եւրոպական առաջնակարգ հեղինակներ. հայերէն գիրքը ժողովրդականանում էր, որովհետեւ թարգմանութիւնները մեծ մասամբ վիպական էին: Տէտէեան հրատարակութիւնները տարածուեցան ոչ միայն թիւրքիայում, այլ և Ռուսաստանում, մատակարարելով ընթերցանութեան նիւթ: Թարգմանուեցան Վիկտոր Հիւգօի «Թշուառները», «Նօտր Դամ Պարիզում», Սուիֆտի «Գիւլիվէրի ճամբորդութիւնը», Միւսէի «Դաբուս մէկ զաւակի խոստովանանքը», Մօլիերի «Ագահն», «Ակամայ բժիշկ», «Տարտիֆ», Շէքսպիրի «Հոմէոս եւ Ջուլիէտ», Լամարտինի «Ռաֆայէլը» եւ այլն եւ այլն: Զմիւռնիայի թարգմանիչներից յիշատակութեան արժանի են Գրիգոր Զիլինկերեան, Սարգիս Տէր-Գասպարեան, Մեսրոպ Լազարեան, Տէտէեան եղբայրներ, օրիորդներ Լիւսի Պալասանեան, Մարիամ Զեմակեան, Կոռնելիա Փարիզեան:

Այս բոլոր հրատարակութիւնները, ի հարկէ մի կամ երկու տարուայ գործ չեն. Տէտէեան տպարանը երկար գոյութիւն պահպանեց: Հիմնադիրը վախճանուեց 1868-ին, բայց նրա եղբայրները շարունակեցին գործը եւ եօթանասնական թուականներին:

Մամուրեանին Զմիւռնիայի թարգմանական հրատարակութիւնների մէջ պատկանում է մի պատուաւոր տեղ: Նա թարգմանել է Եօթէն Սիւրի «Գաղտնիք Պարիզում» (8 հատոր), Դիւմայի «Երեք հրացանակիրք» (3 հատոր) եւ «Բռան տարի ետք» վալտէր Սկօտի «Իվանօ» (3 հատոր), Գէօթէի «Վէրթեր», Վօլտէրի «Միքրօ-Մեղաս», թարգմանել է նաեւ «Բրաթլօն դերկոմ» (12 հատոր), «Ամօրի», «Ամուրիի մը կեանքը» եւ այլն: Թէեւ նիւթերի ընտրութեան մէջ Մամուրեանը չէ կարողացել մի յայտնի ուղղութեան, քննական հայեացքի հետեւել, բայց եւ այնպէս, մեր կարծիքով, թարգմանութիւնները նրա զրական գործունէութեան մէջ ամենակարեւոր տեղն են բռնում: Նշանաւոր է մանաւանդ արարական հռչակաւոր «Հաղար եւ մէկ գիշերներ»-ի թարգմանութիւնը (6 հատոր), որ երկու հրատարակու-

թիւն ունեցաւ և կարգացում էր յափշտակութեամբ: Մամուլ-  
բեանի լեզուն առհասարակ հարուստ է, հարթ և ճկուն:

Մի երկար շարք են կազմում Մամուլբեանի և ինքնուրոյն  
հեղինակութիւնները. բայց այստեղ այլ ևս լաւ յատկութիւններ  
չատ քիչ ենք գտնում: Ի՞նչ ասէք որ գրած չը լինի նա. և՛ ա-  
նաջող, չոր ու ցամաք դասագրքեր, և՛ «Առողջաբանութիւն աղջ-  
կանց», և՛ «Իրաւաբանութիւն», և՛ «Առաին տնտեսութիւն», և՛  
«Հայոց պատմութիւն», և՛ վէպ, թատերագրութիւն...

Առհասարակ Մամուլբեանը չէ թողել մի ինքնուրոյն գործ, որ  
ցոյց տար նրա մէջ մեծ տաղանդ, որին վիճակուած լինէր երե-  
ւոյթ կազմել մեր գրականութեան մէջ: Փոքր ի շատէ ուշադրու-  
թեան արժանի են նրա երիտասարդական հասակի գրուածքները:  
«Կոռնակի» մէջ տպուած նրա «Անդլիական Նամականի» յօդուած-  
ները խօսում են գլխաւորապէս հայերի պատմական անցեալի  
մասին և տալիս են թուուցիկ լուսաբանութիւններ, որոնք նոյն  
խակ այն ժամանակները մեծ նորութիւն չէին կարող համարուել:  
Աւելի հետաքրքրական է «Հայկական Նամականի» գիրքը, որի  
մէջ Մամուլբեանը հաւաքել է զանազան տեղերում տպագրած իր  
յօդուածները: Այդտեղ չօչափում են ժամանակակից հարցեր և  
հեղինակը ցոյց է տալիս քննական կարողութիւն, լայն հայեացք-  
ներ: Գրաւիչ է այդտեղ մանաւանդ լեզուն, տպաւորող, պարզ,  
կիսավիպական: Մամուլբեանը Սահմանադրութեան կոյր երկըր-  
պագուններից չէր. պաշտպանելով ժողովրդական բուէի սկզբուն-  
քը, նա մի և նոյն ժամանակ կենդանի գործ էր պահանջում,  
մարտնչում էր քարայնող ձեականութեան դէմ և միշտ առաջ  
էր քաշում սահմանադրական բարեքններից զուրկ գաւառները:  
Բայց այդ նամակների մէջ դուք իզուր կ'որոնէք խոր ուսումնա-  
սիրութիւն, հարցերի բազմակողմանի լուսաբանութիւն, մի բան,  
որ միշտ պակասել է թիւրքահայ հրապարակախօսութեան: «Հայ-  
կական Նամականի» ֆելիէտօնական փոքրիկ գրութիւններ են,  
կարգացում են հետաքրքրութեամբ, բայց խոր, համողիչ տպա-  
ւորութիւն չեն թողնում:

Մնում է այժմ խօսել Մամուլբեանի խմբագրութեան գոր-  
ծունէութեան մասին: 1871 թուականից նա սկսեց «Արեւելեան  
Մամուլ» ամսագրի հրատարակութիւնը, որ շարունակւում է և  
այժմ: Մենք չենք կարող մանրամասն խօսել նրա մասին, որով-  
հետև լաւ չենք ճանաչում նրան: Սակայն ընդհանրապէս յայտնի  
է, որ ամուսնիցը մանաւանդ եօթնամանական թուականների  
ընթացքում, լուրջ օրգանի համբաւ ունէր արևմտեան հայերի  
մէջ: Քանի տպագրւաւրտն պայմանները նպաստաւոր էին ազատ  
դատելու համար, Մամուլբեանը գրում էր ինքնարոյն յօդուածներ:

որոնք ազգու էին և չէին կարող տպաւորութիւն չը թողնել: Խմբագիրը յայտնի էր մանաւանդ «Շահնուր» ստորագրութեան կրող իր նամակներով: Թէև ամսագիրը, չը նայած իր փոքր ծաւալին, լցուած էր մեծ մասամբ թարգմանական գրուածքներով բայց և այնպէս իբրև գրական մի ժողովածու նա աւելի լաւ բովանդակութիւն ունէր, քան միւս, ժամանակակից պարբերական հրատարակութիւնները:

Մի հիմնական պակասութիւն, սակայն, չէր կարող իր խոր կնիքը չը գնել «Արեւելեան Մամուլի» վրայ. որքան առաջ էր գրնում ժամանակը, այնքան յետ էր մնում ամսագիրը. Մամուրեանը ծերացող հրապարակախօս էր. առանց այդ էլ նա հրապարակ էր իջել սահմանափակ հայեացքներով, և չօլինիստական տենդենցիորաներն ակսեցին խնդրել նրա գործունէութիւնը, քանի որ կեանքի մէջ առաջ էին գալիս նոր հոսանքներ, նոր դադափարներ: 1884 թուականի կաթողիկոսական ընտրութիւնների ժամանակ նա այնպիսի դիրք բռնեց, որ տապալեց նրան էլ, նրա ամսագիրն էլ: Իսկ Թիւրքիայում վերջին տասնեակ տարիներում տիրող իրականութիւնը բոլորովին սպանեց ամսագիրը, դարձնելով նրան լոկ տպագրած թուղթ, ինչպէս և առհասարակ բոլոր միւս պարբերական հրատարակութիւնները: Այստեղ, ի հարկէ, հանդամանքներն են մեղաւոր: Բայց խղճմտանքով դատելով, Մամուրեանը նոյն իսկ ամենալաւ հանդամանքների մէջ էլ չը կարողացաւ խոշոր, լուսատու գործիչի, ղեկավարող հրապարակախօսի դիրք գրաւել:

Դա գրական մի միջակութիւն է, բայց զարմանալի աշխատասէր, բեղմնաւոր մի գրիչ: Երկար, շատ երկար է նա մնացել մեր գրական ասպարէզում, արել է շատ բան, մնացել է մինչև կեանքի վերջը մի յայտնի չրջանի հասկացողութիւնների ներկայացուցիչ: Այս հանգամանքներն էլ բաւական են, որ նա արեւմտեան հայերի գրական պատմութեան մէջ իր տեղն ունենայ: